# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. շենք 25
Հեռախոս 093644146 , էլ. Փոստ urasar.lori@mta.gov.am

Թիվ 117
28.12.2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից գրությամբ Ձեզ եմ ներկայացնում Ուրասար համայնքի 23.12.2016թ. կայացած ավագանու նիստի թիվ 36,37 որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի N 36

### ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<ՏԻՄ>> օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 25.02.2014թ. ՇԱԹ-29/493 օգտակար հանածոյի արդյունահանման թույտվությունը, 25.02.2014թ. NL-493 լեռնահատկացման ակտը և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014 թվականի փետրվարի 25-ի <<Օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի տրամադրման մասին>> N 32-Ա հրամանը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Ուրասար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկությանը՝ ըստ որի նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Ուրասար համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-106-0136-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.5403 հա ,արոտավայր՝ Ուրասարի դոլերիտային բազալտի հանքավայրի շահագործման նպատակով փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ընդերքօգտագործման հողերի գործառնական նշանակության:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Անուն ազգանուն | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | | | |
| Ապիկյան Արման | | | |
| Ջանոյան Արկադի | | | |
| Ասլանյան Վրեժ | | | |

Համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146 , էլ. փոստ urasar.lori@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի N 37

## ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2019ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2)-րդ կետի պահանջներով՝

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լոռու մարզի Ուրասար գյուղական համայնքի 2017-2019թթ.սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը

| Անուն ազգանուն | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | [signature] | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Զանոյան Արկադի | [signature] | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ _______________ Ա.Կիրակոսյան